ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.11.2017թ.
322-ի 1

Սփյուռքի նախարար
տիկին Հրանուշ Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Հակոբյան,
ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2017 թվականի ընթացքում պետական բյուջեից կազմակերպություններին տրամադրած դրամաշնորհային միջոցների մասին՝
   - ներառյալ դրամաշնորհային մրցույթում մասնակցած և հաղթած կազմակերպության/ների անվանում/ները,
   - իրականացվող/իրականացված ծրագրերի ցանկը,
   - յուրաքանչյուր ծրագրին տրամադրված գումարի չափը,
2. Ձեր գերատեսչության պաշտոնական էջում տեղադրված՝ ֆինանսավորված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների հիպերհղումը (եթե առկա է),
3. 2017 թվականի ընթացքում Ձեր գերատեսչության կողմից նվիրատվություններ, սուբսիդիաներ, գնումներ և այլ տեսակի ֆինանսավորում ստացած հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների ցանկը՝ ներառյալ ֆինանսավորման հիմքը և տրամադրված գումարի չափը։:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝
Լիանա Դոյդոյան
ԻԱԿ նախագահ